

տեղեւոյն մէջ միայն մէկ հայ եկեղեցի կայ, մէկ քահանայով եւ մէկ սարկաւազով:

Իսմայէլէն կը յայտնեն թէ միայն մէկ եկեղեցի կայ, մէկ քահանայով եւ երեք պատուակալ դպիրով:

Եւաչի «Մոլտավիոյ հայոց ազգային կառավարութիւնը» պատասխանած է թէ ինք ուղղակի նախարարութեան պիտի ղրկէ պահանջուած տեղեկութիւնները:

1894-ին Պետրոս քահ. Մամիկոնեան (Ռումանիայոց ներկայն եւ ապագայն, Կալաց, 1895), հետեւեալ թիւերը կուտայ Ռումանիոյ զանազան քաղաքներու հայութեան մասին.—

Պուրէշ՝ 180-200 տուն, Եաշ՝ 70 տուն (315 անձ՝ չըջակայ գիւղերով մէկտեղ), Պոթոլան՝ 150 եւ չըջակները 100 տուն, Ռուման՝ 70 տուն, Պաքով՝ 40 եւ չըջակները 40 տուն, Թրկո-Օքնա՝ 60 տուն (300 անձ), Ֆոքչան՝ 100 եւ չըջակները 100 տուն, Կալաց՝ 50 տուն (200 անձ), Պրալլա՝ 40 տուն եւ նաւահանգիստին մէջ 4-500 բանուորներ, Թուլչա՝ 80 տուն, Պապաուազ՝ 45 տուն, Սուլինա՝ 20 տուն, Բոսթանցա՝ 70-75 տուն, Փիթէշթ՝ 20 տուն:

19-րդ դարու երկրորդ կէսէն սկսեալ Պուլքովինայի հայոց թիւը հետզհետէ կը նուազի, որովհետեւ ան կը կորսնցնէ իր առեւտրական դիրքը. 1873-ի տնտեսական տաղնապը մանաւանդ ցանուցըիւ կ'ընէ Պուլքովինայի հայութիւնը (Dr. Polek: Die Armenier in der Bukovina, էջ 29-30):

Հետեւեալ թիւերը կը բացատրեն թէ ինչպէս տարազնեցան Պուլքովինայի հայերը.—

1851-ին 2400 հայ (475 կաթողիկ)
1857-ին 2313 հայ (989 կաթողիկ)
1869-ին 1710 հայ (882 կաթողիկ)
1880-ին 1442 հայ (756 կաթողիկ)
1890-ին 1293 հայ (747 կաթողիկ)
1900-ին 820 հայ (439 կաթողիկ)
1910-ին 757 հայ (411 կաթողիկ)

19-րդ դարու վերջին քառորդին, հաւանաբար 1500 տուն էին հայերը Ռումանիոյ մէջ (Մոլտավա եւ Մունթէնիա միասին), 400 տուն Պեսարապիա, 200 տուն Պուլքովինա եւ 1000 տուն Թրանսիլվանիա, համագումար 3100 տուն կամ մօտ 15,000 անձ: Այս թիւը աւելի ճշգրիտ գումարի մը պիտի վերածուէր, եթէ զաղթա-

կանական նոր հոսանք մը Պոլսէն ու Անատոլուէն չգար հաստատուելի Ռումանիա:

* * *

20-րդ դարու առաջին քառորդին մէջ ալ յիմակագրութիւններ չունինք: Դժբախտաբար նոյնիսկ այս դարուն սկիզբը պետական մարդահամարները բնակչութեան թիւը չեն ճշգրտած ծագման: Այնպէս որ պետութիւնն իսկ չի գիտեր թէ ինչ ծագում ունին իր բնակիչները, եւ ինչ է իւրաքանչիւրին տոկոսը ընդհանուր բնակչութեան մէջ: Նման փորձ մը տեղի ունեցաւ 1926-ի վերջերը Ալէքէսքուի կառավարութեան օրով, եւ մարդահամարի հարցարաններուն մէջ նշանակուեցաւ ոչ միայն բնակիչներուն հպտակութիւնը, կրօնքը, այլ նաեւ անոնց ցեղային ծագումը: Դժբախտաբար այս մարդահամարը վիժեցաւ, եւ զաղտնի պահուեցաւ անոր արդիւնքը:

Ֆիլիպէի Ռազմիկ թերթը, 1905-1906-ին, Պալքաններու մէջ ցրուած հայոց յիմակագրութիւնը կազմելու փորձ մը ըրաւ՝ հրատարակելով մասնաւոր հարցարան մը: Պատասխան տրւին նաեւ Ռումանիայէն շատ մը քաղաքներ: Շահեկանութենէ զուրկ չէ այդ թիւերն ալ հրատարակել.—

Պուրէշ.— 150 տեղացի ընտանիք եւ 250 զաղթական: Հաւանաբար 1000 հոգի:

Բոսթանցա.— 400 ընտանիք եւ քանի մը հարիւր ամուրի: Ընդամէնը 2500 հոգի:

Եաշ.— 40 տեղացի ընտանիք եւ 10-15 տուն ալ զաղթական:

Կալաց.— 50 տուն 200 շունչով, եւ 200 հոգի ալ ամուրի պանդուխտ:

Թուլչա.— 350 հոգի:

Սուլինա.— 30-35 ընտանիք, եւ ամուրի պանդուխտներ, ընդամէնը 300 հոգի:

Պրալլա.— 35-40 տուն եւ նաեւ ամուրիներ, ընդամէնը 350 հոգի:

Պապաուազ.— 35 տուն:

Թրկո-Օֆնա.— 40 տուն:

Պալլըֆ.— 20 ընտանիք եւ 30-40 ալ պանդուխտ:

1910-ին Լեւոն Բարայեան (Հայերը Մոլդաւիայում եւ Բուլքովիայում, Թիֆլիս, 1911) հետեւեալ թիւերը կուտայ Մոլտավիոյ եւ Պուլքովինայի զանազան քաղաքներու հայերուն մասին.—